№10(14)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

2022

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

10 (14)

ԵՐԵՎԱՆ 2022
ЕРЕВАН 2022
YEREVAN 2022

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №10 (14). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2022. – 204 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

ПЕДАГОГИКА

ПЕДАГОГИКО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ СПОСОБНОСТИ САМООЦЕНИВАНИЯ В МЛАДШЕМ ШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ

Грета Оганесовна Акопян
hakobyangreta@gmail.com

К.п.н., доцент кафедры педагогики,
Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье характеризуется понятие «самооценивание», рассматриваются факторы развития способности самооценивания младших школьников. Анализируются возможности учебных предметов, методы и средства развития способности самооценивания в образовательном процессе. Представлен анализ социологических опросов среди учителей начальных классов.
Ключевые слова: младший школьник, самооценивание, рефлексия, мотивация, самопознание, поощрение, критерии оценивания, социологические опросы.

Ինքնագնահատումը մարդու՝ իր արարքների, հատկանիշների, հնարավորությունների գիտակցումն ու դրանց նկատմամբ գնահատողական վերաբերմունքն է: Մարդու ներհայեցողության, ինքնավերլուծության, անդրադարձի, իր կարողությունների, ուժերի նկատմամբ գնահատողական վերաբերմունքի հարցերը հետազոտվում են փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, սոցիոլոգիական, առողջագիտական տեսանկյուններից: Մանկության տարիներին ձևավորված ցածր ինքնագնահա-

տականը դեռահասության և պատանեկան տարիքում կարող է ավելի խոր հետևանքներ ունենալ ինքնարտահայտման, ինքնորոշման և ինքնակայացման առումով, ուստի կարևոր նշանակություն ունեն հիմնահարցի մանկավարժահոգեբանական և սոցիալական տեսանկյունները, որում մեծ դեր է վերապահված դպրոցին և ընտանիքին։

Մարդու մեջ միշտ բախման մեջ են ցանկացածի, հնարավորի և կարողությունների համապատասխանության, համարժեք լինելու խորհրդածությունները։ Որոշ դեպքերում մարդը գերագնահատում է իր հնարավորությունները, ուժերը, այսինքն՝ հավակնում է ավելի մեծ չափով, քան ինքը կարող է անել, կամ ընդհակառակը։ Տարիքային տարբեր կենսափուլերում ինքնագնահատման կարողությունը մարդու մեջ ենթարկվում է փոփոխության՝ կապված կենսական հանգամանքների ու տարբեր գործոնների հետ։ Այն փոփոխվում է, երբ անձը շփվում է հասարակության հետ, կատարում որոշակի գործառույթներ ու սոցիալական դերեր, իրեն համեմատում է ուրիշների հետ, կրում է հաջողություններ ու անհաջողություններ, ստանում խրախուսանք ու հանդիմանանք, գիտակցում իր գործողությունների հետևանքներն ու դրանց սոցիալական նշանակությունը։ «Ինքնագնահատումն անձի՝ իր սեփական արարքների, բարոյական հատկությունների, համոզմունքների, դրդապատճառների բարոյական գնահատումն է, բարոյական ինքնագիտակցության և խղճի դրսևորումներից մեկը» [1։ 164–165]։ Ըստ էության ինքնագնահատումը ձևավորվում է ռեֆլեքսիայի հիման վրա՝ կատարվածի անդրադարձի, հետահայաց գնահատման արդյունքում։ Ինքնագնահատումը զարգացման խթան է. որևէ գործողություն կատարելուց առաջ անձը ներքուստ գնահատում է իր հնարավորությունները, իսկ ավարտից հետո համեմատում իրական հնարավորությունների ու կատարված աշխատանքի համապատասխանությունը, որը որակական առաջընթաց է նրա զարգացման մեջ։

Ինքնագնահատումը՝ որպես իր հնարավորությունների, գործունեության արդյունքների նկատմամբ մարդու վերաբերմունք, նրա մեջ դրր-

ված չէ ի սկզբանե: Կյանքի ընթացքում ձևավորվելով՝ այն աստիճանաբար պայմանավորում է մարդու տեղը այլ մարդկանց հետ ունեցած հարաբերություններում, քննական վերաբերմունքն իր հաջողությունների, անհաջողությունների, վարքի նկատմամբ, դառնում է ինքնակայացման, ինքնադրսևորման ազդակ: Դեռևս վաղ տարիքից սխալ, ոչ համարժեք ձևավորված ինքնագնահատականը դառնում է երեխայի, բարդույթների, թերարժեքության զգացման, անկարողության, դրանց ի հետևանս՝ ուսումնական դրդապատճառների նվազման պատճառ: Նա կորցնում է վստահությունն իր ուժերի նկատմամբ, դառնում անհանգիստ, դյուրագրգիռ, ագրեսիվ կամ, ընդհակառակը, անտարբեր, չհաղորդակցվող, խոցելի, իր արարքների կամ սխալների նկատմամբ անտարբեր:

Ինքնագնահատումը սոցիալապես պայմանավորված գործընթաց է. այն կախված է այս կամ այն հասարակության կամ սոցիալական խմբում ընդունված նորմերից, ընդունելի կամ մերժելի չափանիշներից: Ինքնագնահատումը հաճախ ուղեկցվում է հուզական ապրումներով, սակայն դա սոսկ ապրում չէ, քանի որ ինքնագնահատումը պայմանավորում են որոշակի արժեքներ՝ ճանաչողական, մտածական հուզազգայական բաղադրիչներով: «Ինքնագնահատման դիտարկումը արժեքների հետ փոխադարձ կապերի մեջ անհրաժեշտ պայման է ինչպես առհասարակ ինքնագնահատման երևույթի, այնպես էլ վարքի և դրդապատճառների հետ կապի ընկալման տեսանկյունից» [4]: Ըստ Մ. Ռոզենբերգի՝ անձնային արժեքները որոշակի ցանկալի չափանիշներ են, որոնց հիման վրա ձևավորվում են ինքնագնահատումը և իր վերաբերյալ դատողությունները [5]:

Ինքնագնահատումը ներառում է մարդու ֆիզիկական, վարքային, սոցիալ-հոգեբանական դրսևորումները, որոնք կապված են նրա ինքնության հետ: Մարդու համարժեք ինքնագնահատմանը հաճախ խանգարում են սոցիալական հարաբերությունները, քանի որ երբեմն ինքնագնահատականը ձևավորվում է ոչ թե իր կարողությունների իրական

գնահատման, այլ իր նկատմամբ այլ մարդկանց վերաբերմունքի արդյունքում, որը կարող է չհամապատասխանել մարդու իրական հնարավորություններին:

Ինքնագնահատման կարողության զարգացման գործում գլխավոր դեր ունի երեխայի կենսամիջավայրը՝ ընտանիքը, այն մարդիկ, որոնք շրջապատում են փոքրիկին, ինչպես նաև միջավայրային տարբեր գործոններ, առարկաներ, դեպքեր, իրադարձություններ ու երևույթներ: Ցածր ինքնագնահատական առավել հաճախ ունենում են այն ընտանիքի երեխաները, որտեղ ծնողները քիչ են զբաղվում կամ առհասարակ չեն զբաղվում իրենց երեխայի հետ, անտեսում են նրա հետաքրքրությունները, կարծիքը, ինքնուրույն լինելու մղումը, հուզական կապեր չեն ձևավորում. արդյունքում երեխաներն ունենում են միայնակ լինելու զգացում: Երբ երեխան ուշադրության կենտրոնում է, նրա ուժեղ և թույլ կողմերը գնահատվում են համարժեք, եթե ծնողները հետևողականորեն զբաղվում են իրենց երեխաներով, ուշադիր և հոգատար են, աջակցում և խրախուսում են փոքրիկին՝ սովորեցնելով լուծել յուրաքանչյուր իրավիճակում ի հայտ եկած խնդիրը, ապա երեխան կմեծանա բարձր ինքնագնահատականով, իր ուժերին վստահ:

Ինքնագնահատման կարողությունը նպատակաուղղված զարգանում է ուսումնադաստիարակչական համակարգված գործընթացում, որում հաշվի են առնվում կրտսեր դպրոցականի տարիքային, անհատական, կազմաբնախոսական և նյարդաֆիզիոլոգիական առանձնահատկությունները, միջավայրային տարբեր գործոնների ազդեցությունը, սոցիալ-հոգեբանական հետևանքները:

6/7–10/11 տարեկան հասակը կյանքի կարևոր շրջան է դպրոցական նոր միջավայրում հարմարվելու, ինտեգրվելու, իր իրավունքներն ու պարտականությունները գիտակցելու, համագործակցության, փոխըմբռնման համար: Այս տարիքում երեխայի համար կարևոր է կոլեկտիվում ընդունված, նրա լիիրավ անդամը լինելը: Մեծ նշանակություն ունեն միջանձ-

նային փոխհարաբերությունների բնույթը, ուսուցիչների ու համադասարանցիների վերաբերմունքը, ինչպես նաև ուսումնական և արտաուսումնական միջավայրն ու աշխատանքների բովանդակությունը, մանկավարժական նպատակաուղղված ներգործությունը: Դպրոցում երեխայի ինքնագնահատման կարողության զարգացման համար որոշիչ նշանակություն ունեն ուսումնական հաջողությունները, ուսուցման և դաստիարակությանն մեթոդները՝ խրախուսանքը, զրույցը, օրինակը, մրցույթները, բանավեճը, քննարկումները, դերախաղերը, որոնք երեխային ինքնադրսևորման հնարավորություն են տալիս: Երեխան աստիճանաբար գիտակցում է իր տեղն ու դերը նոր հարաբերություններում՝ շնորհիվ իր հատկանիշների, կարողությունների ինքնաճանաչման: Սակայն երբ կարողությունները համարժեք չեն գնահատվում, երեխան սկսում է իր անցանկալի արարքների պատճառներ փնտրել, կորցնում է վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, դառնում է ագրեսիվ, նեղացկոտ, եսակենտրոն, անտարբեր, չհաղորդակցվող, չի գիտակցում, թե իր որ հատկանիշի պատճառով է թույլ տալիս սխալներ: Այս առումով Գ. Ղույումչյանը գրում է. «Եթե այս տարիքում երեխան անհաջողակ լինի, չզգա իմացության բերկրանքը, ձեռք չբերի սովորելու ունակություն, չսովորի բարեկամանալ, ձեռք չբերի վստահություն իր ընդունակությունների և հնարավորությունների նկատմամբ, հետագայում (սենզիտիվ շրջանի հնարավորություններից դուրս) այդ ամենի ձեռքբերումը կլինի շատ դժվար և կպահանջի անհամեմատ մեծ հոգեկան և ֆիզիկական ուժեր» [2: 157]:

Կրտսեր դպրոցական տարիքում ինքնագնահատումը հաճախ ձևավորվում է հասակակիցների հետ փոխհարաբերություններում իր անձի նկատմամբ նրանց վերաբերմունքի հիման վրա: Ըստ Ա. Պետրովսկու՝ կրտսեր դպրոցականների փոխհարաբերությունները հիմնվում են կյանքի արտաքին հանգամանքների և պատահական հետաքրքրությունների ընդհանրության վրա /միևնույն նստարանին նստելը, նույն շենքում ապրելը և այլն/: 9–10 տարեկան երեխաները զգայուն են այն գնահատա-

կանների նկատմամբ, որ իրենց տալիս են համադասարանցիները ճարպկության, հնարամտության, արագ ըմբռնողության, համարձակության համար: Նրանք սուր ու տհաճ ապրումներ են ունենում, երբ այդ գնահատականները չեն համընկնում իրենց ցանկություններին ու ակնկալիքներին [3: 123]:

Կրտսեր դպրոցականը դժվար է կենտրոնանում որևէ աշխատանքում, նրա համար խթան են մեծահասակի, ծնողի, ուսուցչի խրախուսող խոսքը, ժեստը, հայացքը, դիմախաղը, որը դրական դրդապատճառ է: Երբ թերագնահատում են երեխայի կարողությունները, ապա աննշան թվացող անուրբանկատությունը բերում է վատ հետևանքներ. երեխան պարփակվում է, չի շփվում շրջապատում, ունենում է ցածր ինքնագնահատական:

Կրտսեր դպրոցական տարիքում իր արարքների, գործողությունների ինքնագնահատման կարողությունը պայմանավորում է երեխայի վարքը, վերաբերմունքը, դիրքորոշումը շրջապատի, տարբեր իրադարձությունների հանդեպ: Երեխայի մեջ ձևավորվում է ինքնուրույն գործելու մղումը: Դա իր «ես»-ի հնարավորությունների գիտակցման առաջին քայլն է, որի համար պատասխանատու է երեխայի շրջապատը: Կարևոր է, որ դպրոցում, ընտանիքում երեխային ընդունեն որպես ինքնուրույն մարդ, որը ընկալում, գիտակցում, վերլուծում է իր շուրջը կատարվող երևույթները, ուստի չի կարելի նրան սեփական կամքը թելադրել: Պետք է երեխային հնարավորություն տալ ինքնուրույն վերլուծելու, գնահատելու իր արարքների հետևանքները, պատճառաբանելու և հետևություններ անելու: Այդ դեպքում նա աստիճանաբար կգիտակցի իր գործողությունների հետևանքները, պատասխանատու կլինի դրանց համար: Հետզհետե երեխան կկարողանա հաշվի առնել ուրիշների կարծիքը՝ համաձայնելով կամ չհամաձայնելով, չի պարտադրի իր տեսակետը, չի լինի եսասեր, կամակոր և ագրեսիվ:

Երեխայի ինքնագնահատման համար վնասակար են ինչպես շրջապատողների անհարկի գովեստը, այնպես էլ նսեմացումը, կշտամբանքը:

Այստեղ որոշիչ են երեխայի կենսամիջավայրում ընդունված չափանիշները, ավանդույթները, արժեքները, որոնք կարող են պայմանավորել նրա վերաբերմունքը դպրոցում իր հաջողությունների և անհաջողությունների նկատմամբ: Հաճախ է պատահում, որ ընտանիքում երեխային շռայլորեն գովաբանում են, տալիս են բարձր գնահատական, իսկ ընտանիքից դուրս նրան տրված իրական գնահատականը չի համապատասխանում ընտանիքում ձևավորված գնահատականին: Այս հակասությունը կարող է խընդիրներ առաջացնել երեխայի հոգեկան աշխարհում: Իր հնարավորությունների, կարողությունների ոչ համարժեք գնահատումը, գերագնահատումը կամ թերագնահատումը հետագայում բացասաբար են անդրադառնում ամբողջ կյանքի ընթացքում:

Երեխայի ինքնագնահատման կարողության զարգացման առումով կարևոր են նրա հուզական և վարքային դրսևորումները, բարոյակամային հատկանիշները, խառնվածքը, բնավորությունը, զգայունությունը, հաղորդակցումը:

Կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության զարգացման վերաբերյալ 2020–2021 թ.թ. անցկացվել է սոցհարցում ՀՀ հանրակրթական դպրոցների տարրական դասարանների 86 ուսուցիչների շրջանում: Ստացված տվյալների ընդհանրական վերլուծությունը ներկայացված է ստորև:

«Աշակերտին մղու՞մ եք իր կատարած աշխատանքը կամ արարքն ինքնուրույն գնահատելու» հարցին ուսուցիչների 25.6 %-ը տվել է դրական պատասխան, 30.2 %-ը նշում է «ըստ իրավիճակի», իսկ 44.2%-ը՝ բացասական: Ըստ էության հարցված ուսուցիչների մեծ մասն աշակերտին չի մղում իր արարքներն ու կատարած աշխատանքը գնահատելու, դրական կամ բացասական, ընդունելի կամ մերժելի կողմերը հասկանալու, որը կարևոր է երեխայի ինքնագնահատման կարողության զարգացման առումով:

«Ստեղծու՞մ եք այնպիսի իրավիճակներ, որոնց ընթացքում կարող են դրսևորել աշակերտի ինքնագնահատման դրդապատճառները» հարցին դրական է պատասխանել հարցվածների 27.9 %-ը, երբեմն այդպիսի իրավիճակներ է ստեղծում 32.6 %-ը, 39.5 %-ը չի ստեղծում այնպիսի իրավիճակներ, որոնց ընթացքում կարող էին դրսևորվել երեխաների ինքնագնահատման կարողությունները։

«Երբ աշակերտին որևէ արարքի համար հանդիմանում եք, նա…» հարցին տրված պատասխաններից 24.4 %-ը ընտրել է «դժգոհում, ընդդիմանում է», 61.6 %-ը ընտրել է «լռում է, արտաքուստ դժգոհություն չի արտահայտում», 14 %-ը՝ «պահանջում է մեկնաբանել» պատասխանը։ Ըստ տվյալների՝ գերակշիռ մասը լուռ համակերպվում է, որը կարող է կենսական տարբեր իրավիճակներում երեխային զրկել իր արարքն ինքնուրույն վերլուծելու, արարքի դրական կամ բացասական հետևանքները գիտակցելու, գնահատելու կարողությունից՝ հավանաբար մտածելով, որ ուսուցիչը միշտ իրավացի է։

«Երբ աշակերտին որևէ արարքի, հատկանիշի համար խրախուսում եք, նա…» հարցին տրվել են հետևյալ պատասխանները. «ավելի համարձակ, ինքնավստահ է դառնում»՝ 43.1 %-ը, «ձգտում է միշտ խրախուսանքի արժանանալ»՝ 39.5 %-ը, «սկզբում ոգևորվում է, հետո հանգիստ կամ անտարբեր է դառնում»՝ 17.4 %-ը։ Բնականաբար, կրտսեր դպրոցական տարիքում խրախուսանքը կարևոր գործոն է, և ուսուցիչների պատասխանները ևս վկայում են այդ տարիքում ճիշտ, ոչ չափազանցված, համարժեք խրախուսանքի մանկավարժական արդյունավետության մասին։

«Ի՞նչն եք առավելապես կարևորում դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացման գործում» հարցին 20.9 %-ը նշել է «ընտանիքի դերը դեռ վաղ մանկական տարիքից», 37.2 %-ը՝ «ուսուցիչների դերը և մոտիվացնող գործառույթը», 18.6 %-ը կարծում է՝ «միջանձնային հաղորդակցումը, ակտիվ շփումները», 23.3 %-ը կարևորում է «աշակերտի

ինքնաճանաչմանն ուղղված ուսումնական նյութերի նպատակային կիրառումը»: Կարելի է եզրակացնել, որ, այնուամենայնիվ, առավել մեծ թվով ուսուցիչներ են կարևորում իրենց դերը երեխայի ինքնագնահատման կարողության զարգացման գործում:

«Դաստիարակության ո՞ր մեթոդներն են առավելապես նպաստում համարժեք ինքնագնահատման կարողության զարգացմանը» հարցին 48.8 %-ը նշել է «խրախուսանքը», 23.3 %-ը՝ «օրինակը», 16.3 %-ը՝ «հասարակական կարծիքը», 11.6 %-ը՝ «մանկավարժական պահանջը»: Ըստ էության խրախուսանքի կիրառումը կարևոր գործոն է, մինչդեռ մանկավարժական պահանջը, ըստ երևույթին, չի մղում համարժեք ինքնագնահատման կարողության զարգացմանը:

«Աշակերտի ոչ ցանկալի արարքին ի պատասխան…» հարցին տրված պատասխաններից 9.3 %-ը ընտրել է «անտեսում եմ», 20.9 %-ը՝ «հորդորում եմ, որ ինքը գնահատի իր արարքը», 27.9 %-ը՝ «համեմատում եմ դասընկերների հետ», 41.9 %-ը՝ «նախատում եմ բառերով կամ հայացքով»:

«Կիրառու՞մ եք արդյոք աշակերտի ինքնագնահատման մեթոդներ» հարցին հարցվածների ընդամենը 7.2 %-ն է դրական պատասխանել, 28.2 %-ը կիրառում է երբեմն, ըստ իրավիճակի, իսկ 64.6 %-ը երբեք չի կիրառել: Ըստ էության ինքնագնահատման կարողության զարգացման հատուկ կիրառված մեթոդներով կարելի է հայտորոշիչ տվյալներ ստանալ երեխաների ինքնագնահատման կարողության վերաբերյալ և նպատակաուղղված ներգործություն իրականացնել:

Ամփոփելով ստացված արդյունքները՝ կարող ենք եզրահանգել, որ կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության զարգացման տեսանկյունից հետևողական և լուրջ աշխատանքի կարիք կա: Ուսուցիչների մեծ մասը բավականաչափ միանշանակ վերաբերմունք չունի այս հարցում, ուստի, մեր կարծիքով, անհրաժեշտություն կա ուսուցիչների մասնագիտական պատրաստության ընթացքում կարևորել այս մոտեցու-

մը, ինչպես նաև ուսումնական ծրագրերում առավել շատ ներառել ինքնաճանաչմանը, ինքնագնահատմանն ուղղված թեմաներ։

Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացմանը նպաստում են ուսումնական առարկաների բովանդակությունը, արտադասարանային միջոցառումները, նպատակաուղղված մեթոդական համալիրները։ Ուսումնական թեմաների՝ ինքնագնահատման կարողության զարգացման ներուժի, համապատասխան մեթոդների, միջոցների, հնարների նպատակային կիրառումը կարող է բավականին արդյունավետ լինել։ Քանի որ մայրենի և օտար լեզուները նպաստում են անձի հաղորդակցմանը, ճանաչողությանը, սեփական մտքերը, հույզերն ու զգացմունքներն արտահայտելուն, ուստի երեխաների ինքնագնահատման կարողության զարգացման ներգործուն միջոց են։ Ուսումնական թեմաների, գրական ստեղծագործությունների, տեսաֆիլմերի, մուլտֆիլմերի, իրական կյանքի հերոսների արարքների վերաբերյալ դատողությունները, իրենց ծանոթ կերպարների լավ կամ վատ կողմերի առանձնացումը, գնահատողական դատողությունները երեխայի մեջ կձևավորեն պատկերացումներ իդեալների, արժեքների, նորմերի, դրականի և բացասականի, ընդունելիի ու մերժելիի վերաբերյալ՝ աստիճանաբար զարգացնելով նաև իր արարքների, վարքի ռեֆլեքսիվ կարողությունը, գնահատողական վերաբերմունքը։ Օգտակար է նաև բանավեճի տարրերի կիրառումը՝ երեխաներին մղելով ինքնուրույն կարծիք ձևավորել և ազատ արտահայտվել այս կամ այն երևույթի, հերոսի արարքի վերաբերյալ։ Դերախաղերը ևս կարող են նպաստել ինքնագնահատման կարողության զարգացմանը. ընտրելով որևէ հերոսի կերպար, փորձելով ներկայացնել նրան՝ երեխան որոշ չափով նույնականանում է նրա հետ, փորձում արտահայտել այդ կերպարի հատկանիշները՝ ներքուստ դատապարտելով, ընդունելով կամ մերժելով։ Բնականաբար նրա մեջ ձևավորվում են նաև իր հատկանիշները գնահատելու, կերպարի հետ համեմատելու, հակադրելու կարողություններ։

Տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը նպատակաուղղված է ոչ միայն շրջապատող աշխարհի բնական երևույթների ու տարրերի վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը, այլև ինքնաճանաչմանը, պատասխանատու վարքագծի դրսևորմանը, ինքնակառավարմանը, ինքնավերահսկողությանը, ժամանակի պլանավորմանը, իր պարտականությունների գիտակցմանը, մարդկանց հետ հարաբերությունների ձևավորմանը: Մաթեմատիկան ևս աշխարհաճանաչման, հետաքրքրությունների, մտածողության զարգացման, արագ ու ճկուն կողմնորոշվելու, դատողություններ անելու կարևոր միջոց է, ուստի մաթեմատիկայի դասերը ևս երեխային հնարավորություն են տալիս գիտակցել, համեմատել, գնահատել իր կարողությունները, արագորեն կողմնորոշվել, հասկանալ, թե որ հատկանիշների շնորհիվ կարող է հաջողության հասնել: Երաժշտության, կերպարվեստի, տեխնոլոգիայի, ֆիզիկական կրթության դասերը ևս մեծ չափով նպաստում են ինքնագնահատման կարողության զարգացմանը: Դրանք նպատակաուղղված են երեխայի հոգեմտավոր, ֆիզիկական զարգացմանը, իր ուժերի ճանաչմանն ու ինքնարտահայտմանը, ստեղծագործական և պատկերավոր մտածողության, զգայությունների ու երևակայության զարգացմանը, ուշադրության կենտրոնացմանը, դիտունակությանը: Շարժողական հմտությունների զարգացման արդյունքում երեխան ձեռք է բերում համարձակություն, ինքնավստահություն, գիտակցում է իր առողջության, մարմնի ներդաշնակության, ճկունության, համաչափության կարևորությունը, որն էլ աստիճանաբար հանգեցնում է իր ուժերի համարժեք գնահատմանը:

Օգտակար կլինի տարբեր աշխատանքներ կատարելուց հետո երեխաներին մղել մտածելու, արտահայտվելու, քննարկելու, թե ինչպես կատարեցին տվյալ աշխատանքը, իրենց որ հատկանիշների շնորհիվ լավ արդյունք ունեցան, որ հատկանիշն էր պակասում, ինչ կուզենային ձեռք բերել: Աստիճանաբար կարելի է երեխաներին մղել, որ իրենք սահմանեն չափանիշներ՝ որոշակի աշխատանք կատարելու համար ցանկալի որակ-

ներ, որի արդյունքում նրանք կկարողանան համարժեք գնահատել իրենց իրական հնարավորությունները, և լավագույն հատկանիշներ ունենալու պահանջմունք ու դրդապատճառ կձևավորվի: Ընդ որում հարկ է ի նկատի ունենալ, որ ցանկալի հատկանիշները չպետք է կապել միմիայն ուսումնական հաջողությունների, առաջադիմության հետ. դրանք պետք է վերաբերեն նաև միջանձնային հաղորդակցմանը, ֆիզիկական և հոգեբանական հնարավորությունների գիտակցմանը, ժամանակի արդյունավետ կառավարմանը, վարքային դրսևորումներին, սոցիալական, քաղաքացիական, գեղագիտական և այլ կարողունակությունների:

Կրտսեր դպրոցական տարիքը երեխայի ինքնաճանաչման, ինքնակառավարման, իր արարքների հատկանիշների գիտակցման, իմաստավորման, պատասխանատվության զգացման կարևոր շրջափուլ է, և անհրաժեշտ է, որ այս տարիքում գործունեության բոլոր ձևերում առաջնային դառնան իր կարողությունների համարժեք գնահատման, սեփական ուժերի ու կարողությունների նկատմամբ հավատի ձևավորման հարցերը: Երեխայի ինքնագնահատման կարողությունը որոշում է նրա սոցիալական հարմարման և տվյալ միջավայրում ինտեգրման արդյունավետությունը, այն վարքի կարգավորիչ է, ուղղակի ազդեցություն ունի երեխայի հոգեվիճակի, վարքային հակազդումների, հաղորդակցման, հարմարման և միջանձնային փոխհարաբերությունների բնույթի վրա:

ЛИТЕРАТУРА

1. Բարոյագիտական բառարան // խմբ.՝ Ի.Ս. Կոն: – Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1985: – 456 էջ:
2. *Ղուլումյան Գ.Ե.* Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: գիրք 1. – Երևան, «Զանգակ–97», 2005: – 464 էջ:
3. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն // խմբ.՝ Ա.Վ. Պետրովսկու: – Երևան, «Լույս» հրատարակչություն, 1977: – 393 էջ:

4. *Mruk C.* Self-Esteem: Research, theory, and practice (2nd ed.). – New York: Springer (Also published in London by Free Association Books), 1999.
5. *Rosenberg M., Schooler C., Schoenbach C., Rosenberg F.* Global self-esteem and specific selfesteem: Different concepts, Different outcomes // American Sociological Review. – 1995, V. 60 (February). – PP. 141–156.

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Գ.Հ. Հակոբյան
hakobyangreta@gmail.com

Մ.գ.թ., դոցենտ,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի դոցենտ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում բնութագրված է «ինքնագնահատում» հասկացությունը, քննարկված են կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության զարգացման գործոնները: Վերլուծված են ուսումնական առարկաների հնարավորությունները, կրթական գործընթացում ինքնագնահատման կարողության զարգացման մեթոդներն ու միջոցները: Ներկայացված է հիմնախնդրի վերաբերյալ տարրական դպրոցի ուսուցիչների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումների վերլուծություն:

Բանալի բառեր՝ կրտսեր դպրոցական, ինքնագնահատում, ռեֆլեքսիա, դրդապատճառ, ինքնաճանաչում, խրախուսանք, գնահատման չափանիշ, սոցիոլոգիական հարցումներ:

THE PEDAGOGICAL-PSYCHOLOGICAL PECULIARITIES OF DEVELOPING THE ABILITY OF SELF-ESTEEM AT PRIMARY SCHOOL AGE

G. Hakobyan
hakobyangreta@gmail.com

Ph.D. in Pedagogy, Associate Professor,
Associate Professor at the Department of Pedagogy,
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The article defines the construct of 'self-esteem' and discusses factors shaping the development of the ability of self-esteem among primary schoolchildren. The article also observes the potential of school subjects as well as the means and methods of developing the ability of self-esteem in education. Finally, the article analyses surveys on this topic conducted among elementary school teachers.

Keywords: elementary schoolchildren, self-esteem, reflection, motive, self-knowledge, praise, assessment criterion, surveys.

Информация о статье:
статья поступила в редакцию 27 августа 2022 г.,
подписана к печати в номер 10 (14) / 2022 – 01.12.2022 г.